ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«23» նոյեմբերի 2015թ.

Հաստատում եմ՝
«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի
պետ _____ Մ. Անանյան
ՍՑ-ԳԲԽ-12/15 բողոքը քննող
հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 23.01.2015թ. N 73-1/755438-15 գրությամբ ներկայացված «Ջիարջի Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը, պարզել ենք հետևյալը.

1. **ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը**

ՀՀ ֆինանսների նախարարությունը 23.01.2015թ. N 73-1/755438-15 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն)՝ առաջարկելով ուսումնասիրել «Ջիարջի Գրուպ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում

(այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում կազմակերպել բողոքարկման գործընթաց:

ՀՀ ֆինանսների նախարարությունը 23.01.2015թ. N 73-1/755438-15 գրությամբ Կենտրոնին է ներկայացրել «Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 21.01.2015թ. N 13-01/51 գրության պատճենը:

2. «Ջիարջի Գրուպ» ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետը, կարծիք ստանալու նպատակով 29.01.2014թ. N 09/032-118 գրությամբ դիմել է «Ջիարջի Գրուպ» ՍՊԸ-ին:

«Ջիարջի Գրուպ» ՍՊԸ-ն Կենտրոնի գրությանը չի պատասխանել և չի ներկայացրել պահանջվող փաստաթղթերն ու իր դիքորոշումը:

«Ջիարջի Գրուպ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով 23.06.2015թ. ժամը 17:00-ի ՍՑ-ԳԲԽ 12/15 բողոքը քննող հանձնաժողովի նիստի մասին, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. «Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 29.01.2015թ. N 04/032-119 գրությամբ դիմել է «Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» ՓԲԸ-ին՝ խնդրելով տալ կարծիք և տրամադրել անհրաժեշտ փաստաթղթեր:

Պատվիրատուն 04.02.2015թ. N 13-01/120 գրությամբ ուղարկել է «Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի և «Ջիարջի Գրուպ» ՍՊԸ-ի միջև 26.11.2014թ. կնքված N Բ153/14 գնման պայմանագրի պատճենը և նշված պայամանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ ծանուցումը:

2. ՍՑ-ԳԲԽ-12/15 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ֆինանսների նախարարության 23.01.2015թ. N 73-1/755438-15 գրությամբ «Ջիարջի Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի և «Ջիարջի Գրուպ» ՍՊԸ-ի միջև 26.11.2014թ. կնքվել է N Բ153/14 գնման պայմանագիրը (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

2. Պայմանագրի 7.1 կետով նախատեսվել է, որ այն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից:

3. Պայմանագրի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, սահմանվել են Ընկերության երեք տեսակի աշխատանների կատարման պարտականությունները:

4. Պայմանագրի հավելված 1.2-ով սահմանվել է աշխատանքների կատարման Պատվիրատուի 21 առանձին մասնաշենքերը:

5. Պատվիրատուի և կապալառուի միջև 26.11.2014թ. կնքված N Բ153/14 գնման պայմանագրի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, պարտականությունների կատարման ժամկետ է սահմանվել պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրից (26.11.2014թ) 31 աշխատանքային օր:

6. Պատվիրատուն 15.01.2015թ. գրությամբ միակողմանի լուծել է պայմանագիրը:

7. Պատվիրատուն՝ 08.10.2015թ. թիվ 13-01/1469 գրությամբ հայտնել է, որ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի և «Ջիարջի գրուպ» ՍՊԸ-ի միջև 26.11.2014թ. կնքված «ԲԷՑ-ՊԸԱՇՁԲ-14/-56» ծածկագրով տուժանքի մասին համաձայնության համաձայն՝ «Ջիարջի գրուպ» ՍՊԸ-ն պետք է վճարի 759000 (յոթ հարյուր հիսունինը հազար) ՀՀ դրամ՝ գնման պայմանագիրը ժամանակին չկատարելու համար:

<u>4. ՍՑ-ԳԲԽ-12/15 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը</u>

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել

է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

ՀՀ կառավարության 2015թ. հունվարի 30-ի թիվ 105-Ն որոշման 7-րդ կետի համաձայն՝ մինչև նույն որոշումն ուժի մեջ մտնելն սկսված և չավարտված գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գնումների գործընթացը սկսելու պահին գործող իրավական ակտերով:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» այդ պահին գործող կարգի (մինչև ՀՀ կառավարության 30.01.2015թ. 105-Ն որոշմամբ կատարված փոփոխությունների խմբագրությամբ, այսուհետ նաև՝ Կարգ) 149-րդ կետի 5-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ գնումների բողոքարկման խորհրդի ընդունած որոշման հիման վրա մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է 3 տարի ժամկետով, եթե ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որի հետևանքով պատճառված վնասի, հաշվարկված տույժի կամ տուժանքի չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը կամ նույն կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերով նախատեսված վնասը, հաշվարկված տույժը կամ տուժանքը չի վերականգնվել մինչև բողոքարկման խորհրդի կողմից համապատասխան որոշումը ընդունվելը:

Պատվիրատուի և Ընկերության միջև 26.11.2014թ. կնքված N Բ153/14 գնման պայմանագրով Ընկերությունը ստանձնել է «Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի՝ 21 մասնաշենքերում աշխատակիցների հաճախությունների հաշվառման էլեկտրոնային ավտոմատացված համակարգի ներդրման՝ 3 տեսակի աշխատանքների կատարման

պարտավորությունները՝ եռաձող պտտադռնակ՝ տուռնիկետ, ծրագրային ապահովում և քարտ անվանացանկով:

Պայմանագրի թիվ 1 հավելված՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակցույցով նախատեսվել են Ընկերության պարտականությունները և դրանց կատարման ժամկետ է սահմանվել պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 31 աշխատանքային օր, այն է՝ 15.01.2015թ.:

Պատվիրատուն 15.01.2015թ. N 13-01/22 գրությամբ՝ հիմք ընդունելով պայմանագրի 2.1.3 կետը և 2.3.1 կետի «բ» ենթակետը՝ «Ջիարջի գրուպ» ՍՊԸ-ի կողմից Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման ուղղությամբ որևէ գործողություն չկատարելու հիմքով 16.01.2015թ. միակողմանի լուծել է Պայմանագիրը:

Այսպիսով, «Ջիարջի Գրուպ» ՍՊԸ-ն ավելի քան մեկ անգամ խախտել է Պայմանագրով ստանձնած պարտավորությունը:

Պատվիրատուն՝ 08.10.2015թ. թիվ 13-01/1469 գրությամբ հայտնել է, որ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի և «Ջիարջի գրուպ» ՍՊԸ-ի միջև 26.11.2014թ. կնքված «ԲԷՑ-ՊԸԱԾՁԲ-14/-56» ծածկագրով տուժանքի մասին համաձայնության համաձայն՝ «Ջիարջի գրուպ» ՍՊԸ-ն պետք է վճարի 759000 (յոթ հարյուր հիսունինը հազար) ՀՀ դրամ՝ գնման պայմանագիրը ժամանակին չկատարելու համար:

Նկատի ունենալով, որ Ընկերության կողմից Պայմանագրով նախատեսված պարտավորությունն ավելի քան մեկ անգամ խախտվել է և վերոնշյալ խախտումները հանգեցրել են Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծմանը, ինչպես նաև մինչ Կենտրոնի կողմից բողոքարկման խորհրդին սույն եզրակացության տրամադրումը գնման պայմանագիրը ժամանակին չկատարելու համար հաշվարկված տուժանքը Ընկերության կողմից վճարված լինելու վերաբերյալ որևէ ապացույց չի ներկայացվել, գտնում ենք, որ առկա են հիմքեր «Ջիարջի Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու համար:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք ՀՀ ֆինանսների նախարարության 23.01.2015թ. N 73-1/755438-15 գրությամբ «Ջիարջի Գրուպ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված մեկ տարվա ընթացքում «Ջիարջի Գրուպ» ՍՊԸ-ի կողմից գնումների գործընթացին

մասնակցելու հայտ ներկայացնելու դեպքում, այդ պահից հաշված երեք տարի ժամկետով:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի վարիչ՝ Մ. Կատվալյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ՍՑ-ԳԲԽ-12/15 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Մ. Մանուկյան